https://doi.org/10.46991/hc.2022.17.1.265

Վանիկ Վիրաբյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան, պ.գ.դ., պրոֆեսոր

Գրիգորյան Ավետիս, Բոբոխյան Արսեն, Օպերացիա «Զոդ».
Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը, Երևան, Newmag, 2022, 404 էջ

Հիմնաբառեր. Հայաստանի առաջին հանրապետություն, Սոթքի բնագիծ, «Զոդ» օպերացիա, Բասարգեչար, Ավետիս Գրիգորյան, Արսեն Բոբոխյան, Գեղարքունիքի մարզ:

Գրախոսության մեջ ներկայացված է 1919 թ. Հայոց պատմության կարևորագույն դրվագներից մեկին «Զոդ» օպերացիային: Ավետիս Գրիգորյանի ու Արսեն Բոբոխյանի հեղինակած աշխա-տանքը Զոդ-Սոթքի Հայաստանի առաջին հանրապետության մոռացված էջերի մասին է, որոնք, անկասկած, 20-րդ դարի հայոց պատմության տարեգրության ամենապայծառ դրվագներից են:

Vanik Virabyan
Armenian State Pedagogical University After
Khachatur Abovyan Doctor of History,
Professor /Chair of the History of Armenia

Avetis Grigoryan, Arsen Bobokhian "The Zod"Operation:
How Armenia Preserved the Frontier of Sotk in 1919, Yerevan, Newmag, 2022, p. 404

Keywords: The First Republic of Armenia, frontier of Sotk, "The Zod" operation, Basargechar, Aveis Grigoryan, Arsen Bobokhyan, Gegharkunik Province.

One of the most important episodes in Armenian history, "The Zod" operation in 1919, is presented in the review. The authors are Avetis Grigoryan and Arsen Bobokyan. The work is about the forgotten pages of the First Republic of Armenia, related to Zod-Sotk, which are undoubtedly one of the brightest episodes in the annals of the Armenian history of the 20th century.

Ваник Вирабян
Армянский государственный педагогический университет
имени Хачатура Абовяна Доктор исторических наук,
профессор кафедры истории Армении

Аветис Григорян, Арсен Бобохян Операция «Зод»:
Как Армения сохранила рубежи Сотка в 1919 году, Ереван, Newmag, 2022, стр. 404

Ключевые слова: Первая Республика Армения, рубежи Сотка, операция «Зод», Басаргечар, Аветис Григорян, Арсен Бобохян, Гегаркуникская область.

В рецензии представлен один из важнейших эпизодов армянской истории – операция «Зод» 1919 года. Авторы - Аветис Григорян и Арсен Бобохян. В работе речь идет о забытых страницах Первой Республики Армения, связанных с Зод-Сотком, которые, несомненно, являются одним из самых ярких эпизодов в летописи армянской истории XX века.

Հայ ընթերցողին է ներկայացվել մի գիրք, որը բովանդակային տեսանկյունից անանց արժեք ունի։ Ավետիս Գրիգորյանի ու Արսեն Բոբոխյանի հեղինակած աշխատանքը Զոդ-Սոթքի 1919 թ. մոռացված էջերի մասին է, որոնք, անկասկած, Առաջին հանրապետության տարեգրության ամենապայծառ դրվագներից են։ Հեղինակները նորովի լուսաբանել են Ադրբեջանի տարածքային նկրտումները Հայաստանի Հանրապետության Բասարգեչարի, ներկայիս Գեղարքունիքի մարզի մի զգալի մասի նկատմամբ՝ ձգտելով անդամահատել Հայաստանի համար կենսական այդ շրջանը մայր հայրենիքից։ Հեղինակներին միանգամայն հաջողվել է փաստառատ հենքի վրա ցույց տալ ազերիների անօրինական հավակնությունները Սոթքի շրջանի նկատմամբ, ինչպես և 100 տարի անց։

Ավետիս Գրիգորյանը և Արսեն Բոբոխյանը, ցույց տալով Ադրբեջանի հավակնությունները, հիմնավոր փաստերով բացահայտել են Ադրբեջանի սադրիչ-դավադրական գործողությունները ՀՀ-ի նկատմամբ, որի տարբեր մասերում բնակվող մահմեդական բնակչությանը ադրբեջանական իշխանությունները 1918-1919 թթ. հրահրում էին հակապետական ու հակահայկական խռովարարական քայլերի Սոթքի շրջանում՝ ձգտելով այն կտրել Հայաստանից և բռնակցել Ադրբեջանին։ Հարկ է ասել, որ դեռ 2003, 2009, 2011, 2015 թթ. խնդրին որոշակի կտրվածքով (ռազմաքաղաքական մեկնակետից) առաջին անգամ անդրադարձել է պատմաբան Վանիկ Վիրաբյանը, իսկ 2008 թ. հարցը շատ հակիրճ դիտարկվել է արևելագետ Դավիթ Կնյազյանի, 2012 թ.՝ պատմագետ Համլետ Հարությունյանի կողմից[1]։

Ա. Գրիգորյանի և Ա. Բոբոխյանի փաստառատ ու դիտարժան աշխատանքում կարևորվել է հայկական կողմի խաղասիրական մոտեցումը զոդյան բախման հանգուցալուծմանը, որին ադրբեջանական կողմը պատասխանել է սադրիչ-հակահայկական քայլով՝ սպանելով այդ օրը թուրքերի տանը հյուրընկալված Սիլիկյան եղբայրներին և նրանց երկու ուղեկիցներին, դեռ ավելին՝ նրանց գլխատված գլուխները ցուցադրաբար ցույց տալով մուսուլմանական գյուղերում։ Այդ մեկնակետից էլ հեղինակների կողմից կարևորվել են նաև Զոդի սպանության կազմակերպիչների ու առհասարակ մասնակիցների հետ կապված մի շարք կարևոր հանգամանքների սկզբունքային բացահայտումն ու գնահատումը, ինչպես նաև հնագիտական պեղումների ընթացքում Սիլիկյան եղբայրների գերեզմանի հայտնաբերումը։ Ըստ հեղինակների կարևոր եզրահանգման՝ Զոդում Սիլիկյան եղբայրների սպանությունների կազմակերպիչների նկատմամբ իրագործվել է «Զոդյան Նեմեսիս»՝ լուծելով Սիլիկյան եղբայրների վրեժը։

---

[1] *Վիրաբյան Վ. Հ.,* 2003, Հայաստանի առաջին հանրապետության միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918-1920 թթ.), Երևան, «Ասողիկ» հրատ., էջ 98-141։ *Վիրաբյան Վ. Հ.,* 2009, Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը (1918-1920 թթ.), Երևան, «Լուսակն» հրատ., էջ 222-253։ *Վիրաբյան Վ. Հ.,* 2011, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 128-139։ Վիրաբյան Վ. Հ., 2015, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ. (Հետախուզություն, բանակ և ՆԳՆ). Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 423-445։ *Կնյազյան Դ.,* 2008, Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, Հեղ. հրատ., էջ 91-93։ *Հարությունյան Հ. Մ.,* 2012, Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 283-286, 295-310։

Հատկանշական է նաև, որ ինչպես շատ տեղին նշում են Ա. Գրիգորյանն ու Ա. Բոբոխյանը, մինչ ***«Զոդի» օպերացիայի*** հանգուցալուծումը ՀՀ զինված ուժերը սկզբում փորձել են խաղաղ հանգուցալուծում գտնել. զուռնա-դհոլի նվագակցությամբ մոտեցել են թաթարական բնակավայրերին՝ որպես հակամարտության լուծման ձև առաջարկելով խաղաղություն, և միայն գնդակոծվելուց հետո պատասխանել են կրակով[1]: Արդի մեծ հնչեղություն ունեցող այս կարևոր հանգամանքների բացահայտումն էլ այս արժեքավոր հետազոտության լուրջ արժանիքներից է, քանզի հեղինակները խնդրի պարզաբանմանը մոտեցել են ամենայն գիտական բարեխղճությամբ ու անաչառությամբ՝ շրջանառելով սոթքյան իրադարձությունների մասին առկա ողջ փաստական-արխիվային, պատմագիտական գրականության առկա նյութերը, հնագիտական պրպտումների ողջ արդյունքները՝ որպես կարևոր աղբյուրագիտական վկայություններ ու ձեռքբերումներ:

Ա. Գրիգորյանը և Ա. Բոբոխյանը փաստառատ հենքի վրա կարևորել են 1919 թ. Սևանա լճի ավազանում ծավալված թաթարական ընդգծված հակահայկական ուղղվածություն ունեցող խռովության իրական պատճառների վերհանումը, ժամանակագրական հաջորդականությունն ու ունեցած հետևանքները այդ շրջանում հայ ժողովրդի ու հայկական պետականության կենսական շահերի ու անվտանգային խնդիրների լուծման տեսանկյունից:

Հեղինակների քրտնաջան աշխատանքի շնորհիվ հետազոտական արդյունքները ամբողջացել են, ինչը թույլ է տվել ընթերցող հայ հասարակությանը ներկայացնել արդի մեծ հնչեղություն ունեցող հիմնախնդիր, որը ցայսօր գրեթե անհայտ ու անհասանելի է եղել լայն հասարակությանը, որը Առաջին հանրապետության և, ինչպես տեղին կարծում են իրենք՝ հեղինակները, վերջին հարյուրամյա ընթացքի ամենատպավորիչ էջերից է, հայկական զինուժի և հայ զինվորական փառքի էական դրսևորումներից:

Հատկանշական է նաև հեղինակների մեկ այլ կարևորագույն և խիստ եզրահանգում, որ, ըստ էության, Զոդ-Սոթքի շրջանում ծավալված իրադարձություններում հայ բնակչությունը դիմել է ինքնապաշտպանության՝ հանդես գալով խաղաղասիրական դիրքորոշման ու հաշտվողական մոտեցումների մեկնակետից, ձգտելով պաշտպանել իր շահերը, որը դրսևորվել է նաև դեռևս հնագույն ժամանակներից սկսած: Ըստ այդմ էլ՝ հեղինակները արժևորում են ***«Զոդ օպերացիայի»*** ռազմաքաղաքական և պատմամշակութային նշանակությունը, ինչն անանց խորհուրդ ունի Հայաստանի ապագայի տեսանկյունից: Առաջադրված խնդիրները լուծելու համար հեղինակները ցուցաբերել են միջգիտակարգային մոտեցում՝ հմտորեն գիտական շրջանառության մեջ դնելով ոչ միայն կարևորագույն պատմաարխիվային, այլև հնագիտական ու բանագիտական տվյալները՝ ըստ արժանվույն գնահատելով ու շրջանառելով հայ պատմագիտության ձեռքբերումներն այդ ոլորտում: Գեղարքունիքի մարզում հեղինակների կողմից իրականացված բացառիկ կարևորության հնագիտական պեղումների արդյունքների, ականատեսների վկայությունների ու ժողովրդական բանահյուսությանը առնչվող դիտարժան նյութերի օգտագործումը հետազոտության մեջ ևս նրանց լուրջ ձեռքբերումներից է, ինչը թույլ է տվել խնդրի լուսաբանման ամբողջացմանը ավելացնել ևս մեկ էական գիտաշերտ:

Կարևոր է հեղինակների եզրահանգումը, որ Առաջին հանրապետության տնտեսաքաղաքական ծանր իրավիճակում Զոդ-Սոթքի շրջանում և այլուր քաոս սերմանելով՝ Ադրբեջանն ու Թուրքիան, բացահայտ ռազմաքաղաքական ագրեսիային զուգահեռ օգտագործելով Հայաստանի ներսի՝ մութ բնազդներով առաջնորդվող մահմեդական բնակչության ոչ փոքր զանգվածների հակահայկական տրամադրվածությունը, 1918-1919 թթ. իրագործել են Հայաստանը ներսից ջլատելու, տարածքային առումով անդամահատելու հստակ ռազմավարություն, որի պատճառով ՀՀ սահմանամերձ գոտիները դարձել են պայթունավտանգ, իսկ այդ առումով Բասարգեչար-Գեղարքունիքի շրջանը առանցքային նշանակություն ուներ և՛ կենսական շահերի, և՛ անվտանգային ապահովման առումով: Հեղինակները փաստերով ապացուցում են, որ մահմեդական

[1] Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա., 2022, 15:

խռովարար տրամադրությունների գլխավոր սատարիչը Ադրբեջանն էր, որ հավակնում էր դարերի ընթացքում թուրք-պարսկական և այլ պատերազմների ու արհավիրքների հետևանքով հայ տարրից սակավացած բուն հայկական տարածքների նկատմամբ: Առավել ևս, որ 1918 թ. մայիսին ծնված հայկական պետականությունը ի սկզբանե հայտնվեց հոծ մահմեդական բնակչության շրջափակման մեջ՝ չունենալով Անդրկովկասում իրական բարեկամներ և ընդհանուր շահեր որևիցե նոր ծնված պետական կազմավորման հետ, ինչը պարտադրեց գործադրել մեծ ջանքեր՝ հաղթահարելու անիշխանության երևույթներն ու դրսևորումները Զոդ-Սոթքի, Կարսի, Զանգիբասար-Վեդիբասարի ու այլ շրջաններում, և ձգտելով վերահաստատել հայկական պետականության վերահսկողությունը Ադրբեջանից ու Թուրքիայից սադրվող խռովարար-հակապետական գործողությունների տիրույթում հայտնված հայկական շրջանների նկատմամբ՝ կասեցվեց Հայաստանի տարածքային մասնատման ադրբեջանաթուրքական ծրագիրը: Հեղինակներին միանգամայն հաջողվել է զոդյան իրադարձությունների օրինակով փաստել բացառիկ հաջող մի ռազմական օպերացիայի մասին, որի իրագործման շնորհիվ Հայաստանի հաջողվեց հայկական բանակի փայլուն ու գրագետ գործողությունների շնորհիվ ի չիք դարձնել Ադրբեջանի դիվային ծրագիրը՝ Սոթք-Գեղարքունիքի մարզը դարձնել Ադրբեջանի բաղկացուցիչ մաս, իսկ օպերացիայի գլուխ կանգնած զորապետները Սարդարապատի հերոսներն էին՝ գնդապետ Ալեքսանդր Կ. Շնեուրը և գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանը:

Այս արժեքավոր հետազոտության անքակտելի բաղկացուցիչներն են խնամքով կազմված ծանոթագրությունները, աղբյուրների և գրականության ցանկը, արխիվային փաստաթղթերի ցանկը, նկարների աղբյուրը, տեղանունների նույնականացման և տեղանունների, անձնանունների ու առարկաների ցանկերը, որոնք էլ ավելի են կարևորում կատարված աշխատանքի արժանիքները:

Հենց այդ աղբյուրագիտական հզոր բազայի վրա հենվելով՝ հեղինակները հիմնավոր եզրահանգումների են եկել զոդյան իրադարձությունների մասին ադրբեջանցի պատմաբանների աշխատանքների ոչ բավարար հավաստիության և թույլ տված կեղծիքների, փաստական անճշտությունների վերաբերյալ, որոնք միակողմանի են մոտեցել հայտնի իրադարձություններին: Ա. Գրիգորյանն ու Ա. Բոբոխյանը զոդյան հակահայկական դավադրության նոր կարևոր մանրամասներ և փաստական տվյալներ են շրջանառել, և ասվածը խորապես հիմնավոր ներկայացնելու նպատակով օգտագործել հնագիտական ու բանագիտական անժխտելի ապացույցներ, փաստագրել և քարտեզագրել ռազմական բախումների վայրերն ու զորքերի տեղաշարժերի ուղղությունները: Արժանահիշատակ է, որ կատարված հնագիտական պեղումների արդյունքում, հեղինակների կարծիքով, վաղմիջնադարյան ամրոցի հետ միասին բացվել է եղբայրական գերեզմանատուն, որտեղ թաղված են զոդյան դավադրության ժամանակ դաժանորեն սպանված հայ հերոսները, մասնավորապես Ալեքսանդր և Արշակ Սիկիկյան եղբայրները, ինչը շատ կարևոր է զոդյան հերոսապատման ամբողջացման առումով: Այն թույլ է տալիս խորապես ըմբռնել, թե ինչ կենսական կարևորության խնդիր լուծեցին ***«Զոդի» փառավոր օպերացիայի*** հերոսները՝ Սոթք-Գեղարքունիքի հինավուրց շրջանը փրկելով և պահպանելով Հայաստանի համար, առանց որի այն զրկվում էր նաև իր գոյատևման համար խիստ անհրաժեշտ կենսական ռեսուրսներից, ինչը կրկին վտանգվեց 100 տարի անց՝ 2020 թ. ծավալված Հայաստանի Հանրապետության համար կապիտուլացիոն պատերազմի ժամանակ և դրան հաջորդող պատմաընթացքում:

Ա. Գրիգորյանի և Ա. Բոբոխյանի այս դիտարժան հետազոտությունը, անկասկած, զգալի ներդրում է հայ պատմագիտության մեջ, ինքնատիպ խոսք, որը կատարվել է խորը պատմաքննական-համադրական հիմքի վրա: Այն նաև յուրահատուկ պատգամ է հայ մարդուն ու սերունդներին, թե ինչպիսին կարող է լինել և ինչ պետք է անի հայկական զինուժը, երբ կանգնած է սեփական բնագծերի պաշտպանության դիրքերում: Այն պարունակում է հայկյան խորհուրդ և պատգամ, թե ինչպես կարելի է և պետք է պահել հայրենի երկրի ռազմավարական բնագծերը: